



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ 18(409) «16» հուլիսի 2020թ.**

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

	<b>ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ</b>	
405	«Քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ԱՀ ՀՕ-32-Ն օրենքը.....	3
	<b>ՉՈՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ</b>	
406	«Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր ռազմավարական պլանավորման խորհուրդ ստեղծելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-84-Ն հրամանագիրը.....	9
407	«Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-107-Ն հրամանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-85-Ն հրամանագիրը.....	14
408	«Արցախի Հանրապետությունում 2020 թվականի ապրիլի 12-ին հայտարարված արտակարգ իրավիճակի ժամկետը երկարաձգելու և Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի ՆՀ-32-Ն հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-86-Ն հրամանագիրը.....	15
	<b>ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ</b>	
409	«Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի ՆԿ-9-Ն կարգադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆԿ-3-Ն կարգադրությունը.....	17
	<b>ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>	
410	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 179-Ն որոշումը.....	19
411	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 180-Ն որոշումը.....	20
412	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 181-Ն որոշումը.....	21
413	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի	

	փետրվարի 7-ի N 73-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 200-Ն որոշումը.....	22
<b>ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>		
<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ</b>		
414	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու, լիցենզիայի և լիցենզիայի ներդիրների գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 102 հրամանը.....	24
415	«Փոստային վճարման պետական նշանի նմուշները սահմանելու և գործողության մեջ դնելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 5-Ն հրամանը....	26
416	«Փոստային վճարման պետական նշանի նմուշը սահմանելու և գործողության մեջ դնելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 6-Ն հրամանը.....	30
417	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2014 թվականի հունվարի 22-ի N 4-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի N 17-Ն հրամանը .....	32
418	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության պետի 2008 թվականի սեպտեմբերի 15-ի N 135-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ ոստիկանության պետի N 3-Ն հրամանը .....	33
419	«Քաղաքաշինության բնագավառի լիցենզիայի գործունեության տրամադրման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարության N 182-Ա հրամանը .....	34
420	«Քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների գործունեության տրամադրման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարության N 185-Ա հրամանը .....	35
<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>		
421	ԱՀ գերագույն դատարանի սնանկության գործ ԸԻԴ/0006/04/20 որոշումը .....	36
422	ԱՀ գերագույն դատարանի քրեական նյութ ԸԻԴ/0027/11/19 որոշումը.....	43

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

Ընդունված է 2020 թվականի  
հուլիսի 16-ին

**ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՀԱՄԱՆԵՐՈՒՄ  
ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքների մեղմացման նպատակով Արցախի Հանրապետության Ազգային ժողովը հայտարարում է համաներում:

**Գ Լ ՈՒ Խ 1  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ**

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը կարգավորում է 2020 թվականի հուլիսի 1-ը ներառյալ հանցագործություն կատարելու մեջ կասկածվող, մեղադրվող կամ հանցագործություն կատարած անձանց նկատմամբ համաներում հայտարարելու հետ կապված հարաբերությունները:

**Գ Լ ՈՒ Խ 2  
ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ**

**Հոդված 2. Համաներման կիրառման շրջանակները**

1. Համաներում հայտարարելով՝ պատժից ազատել՝
  - 1) առավելագույնը չորս տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված անձանց.
  - 2) այն անձանց, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, կամ պատժի կրումը հետաձգվել է.
  - 3) ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների դատապարտված անձանց:
2. Համաներում հայտարարելով՝ պատժից ազատել առավելագույնը վեց տարի ժամկետով ազատազրկման դատապարտված՝
  - 1) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամներին.
  - 2) սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ հղի կանանց.
  - 3) սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ երեք կամ ավելի անչափահաս երեխա ունեցող անձանց.
  - 4) սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց.
  - 5) 60 տարին լրացած անձանց.
  - 6) հանցագործությունը մինչև 18 տարին լրանալը կատարած այն անձանց, որոնք նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չեն կրել կամ կրել են, սակայն չունեն դատվածություն.
  - 7) այն անձանց, որոնք Հայրենական մեծ պատերազմի, Աֆղանստանի, Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության

պաշտպանության համար մղված մարտական գործողությունների մասնակիցներ են կամ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավասարեցված են նրանց կամ ունեն բռնադատվածի կարգավիճակ և միաժամանակ նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չեն կրել կամ կրել են, սակայն չունեն դատվածություն.

8) այն անձանց, որոնք Հայրենական մեծ պատերազմի, Աֆղանստանի, Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության պաշտպանության համար մղված մարտական գործողություններում զոհված (մահացած) զինծառայողների, ինչպես նաև Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց հավասարեցված անձանց ամուսին, զավակ կամ ծնող են և միաժամանակ նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ չեն կրել կամ կրել են, սակայն չունեն դատվածություն:

3. Համաներում հայտարարելով՝ պատժից ազատել նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատագրված և ձևով պատիժ չկրած կամ կրած, սակայն դատվածություն չունեցող անձանց, որոնք դատապարտվել են՝

1) առավելագույնը վեց տարի ժամկետով ազատագրված և սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ կրել են ոչ պակաս, քան նշանակված պատժի մեկ քառորդը.

2) առավելագույնը տասը տարի ժամկետով ազատագրված և սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ կրել են ոչ պակաս, քան նշանակված պատժի մեկ երրորդը:

4. Համաներում հայտարարելով՝ պատժից ազատել անզգուշությամբ հանցագործություն կատարելու համար՝

1) առավելագույնը վեց տարի ժամկետով ազատագրված և դատապարտված անձանց.

2) առավելագույնը տասը տարի ժամկետով ազատագրված և դատապարտված և սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ ոչ պակաս, քան նշանակված պատժի մեկ քառորդը կրած անձանց:

5. Քրեական գործի հարուցումը մերժել, հարուցված քրեական գործը կարճել, ինչպես նաև դադարեցնել քրեական հետապնդումը կամ չիրականացնել քրեական հետապնդում 2020 թվականի հուլիսի 1-ը ներառյալ կատարած հանցագործությունների դեպքերով (բացառությամբ մարդու մահվան հանգեցրած դեպքերի, որոնցով առկա է տուժողի իրավահաջորդի առարկությունը), որոնցով՝

1) անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան չորս տարի ժամկետով ազատագրելու.

2) սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություն կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան վեց տարի ժամկետով ազատագրելու.

3) անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են անզգուշությամբ հանցագործություն կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան վեց տարի ժամկետով ազատագրելու.

4) անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է միայն ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ:

6. Սույն հոդվածի 5-րդ մասը կիրառվում է Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի դրույթների պահպանմամբ:

7. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտով նշանակված պատժաչափը կրճատել՝

1) երկու երրորդով՝ անգուցությանը հանցագործություն կատարած անձանց նկատմամբ.

2) կիսով չափ՝ դիտավորությանը հանցագործություն կատարելու համար առավելագույնը տասը տարի ժամկետով ազատազրկման դատապարտված և նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատազրկման ձևով պատիժ չկրած կամ կրած, սակայն դատվածություն չունեցող անձանց նկատմամբ.

3) մեկ երրորդով՝ դիտավորությանը հանցագործություն կատարելու համար առավելագույնը տասը տարի ժամկետով ազատազրկման դատապարտված և նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար ազատազրկման ձևով պատիժ կրած և դատվածություն ունեցող անձանց նկատմամբ.

4) մեկ քառորդով՝ դիտավորությանը հանցագործություն կատարելու համար տասը տարուց ավելի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ:

8. Համաներում հայտարարելով՝ դադարեցնել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց նկատմամբ իրականացվող վերահսկողությունը:

9. Համաներումը չկիրառել (բացառությամբ սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքերի)՝

1) այն անձանց նկատմամբ, որոնց նկատմամբ վերջին տասը տարվա ընթացքում՝

ա. նշանակված պատժաչափը կրճատվել է Արցախի Հանրապետության նախագահի՝ ներում շնորհելու մասին հրամանագրի կամ Արցախի Հանրապետության Ազգային ժողովի՝ համաներում հայտարարելու մասին որոշման հիման վրա, և որոնք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար, կամ

բ. որոնց պատիժը կրելուց ազատել են Արցախի Հանրապետության նախագահի՝ ներում շնորհելու մասին հրամանագրի կամ Արցախի Հանրապետության Ազգային ժողովի՝ համաներում հայտարարելու մասին որոշման հիման վրա, և որոնք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար, կամ

գ. որոնց նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել, կամ քրեական հետապնդումը դադարեցվել է Արցախի Հանրապետության Ազգային ժողովի՝ համաներում հայտարարելու մասին որոշման հիման վրա, և որոնք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար.

2) այն անձանց նկատմամբ, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ կարող են մեղադրվել կամ մեղադրվում են կալանավորման տակ գտնվելու կամ պատիժը կրելու ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են կալանավորման տակ գտնվելու կամ պատիժը կրելու ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար.

3) մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հետախուզման մեջ գտնվող անձանց նկատմամբ, բացառությամբ այն անձանց, որոնք 2020 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ կամովին կներկայանան քրեական հետապնդման մարմիններ, իսկ եթե գործը դատարանի վարույթում է՝ դատարան.

4) հանցագործությունների առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում.

5) Քրեական օրենսգրքի 103-րդ հոդվածի 2-րդ մասով, 111-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով, 130-րդ հոդվածով, 131-րդ հոդվածով, 133-րդ հոդվածի 3-րդ մասով, 18-րդ գլխով, 147-րդ հոդվածով, 148-րդ հոդվածով, 151-րդ

հողվածով, 153-րդ հողվածով, 154-րդ հողվածով, 156-րդ հողվածով, 157-րդ հողվածով, 168-րդ հողվածով, 170-րդ հողվածով, 173-րդ հողվածով, 181-րդ հողվածի 2-րդ և 3-րդ մասերով, 225-րդ, 227-233-րդ հողվածներով, 248-րդ հողվածի 2-4-րդ մասերով, 272-րդ հողվածի 2-րդ և 3-րդ մասերով, 273-րդ հողվածի 2-րդ և 3-րդ մասերով, 276-րդ հողվածով, 277-րդ հողվածի 2-րդ և 3-րդ մասերով, 283-րդ հողվածի 2-րդ և 3-րդ մասերով, 298-րդ հողվածի 4-րդ մասով, 310-313-րդ հողվածներով, 315-319-րդ հողվածներով, 350-րդ հողվածի 2-րդ մասով, 361-րդ հողվածով, 366-րդ հողվածի 2-րդ և 3-րդ մասերով, 378-րդ հողվածի 3-րդ մասով, 405-424-րդ հողվածներով նախատեսված հանցագործությունները կատարելու մեջ մեղադրվող կամ այդ հանցագործությունները կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ, եթե դրանք հանցափորձ կամ հանցագործության նախապատրաստություն չեն.

6) Քրեական օրենսգրքի 347-րդ հողվածով նախատեսված հանցագործությունը կատարելու մեջ մեղադրվող և 37 տարեկանը չլրացած անձանց նկատմամբ, եթե դա հանցափորձ կամ հանցագործության նախապատրաստություն չէ.

7) մի քանի հանցագործություն կատարած անձանց նկատմամբ, եթե այդ հանցագործություններից թեկուզ մեկի համար սույն օրենքով համաներում կիրառելն արգելվում է.

8) այն անձանց նկատմամբ, որոնք դիտավորությամբ կատարած հանցագործության համար պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել են և մեղադրվում են պատժի չկրած մասի ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են պատժի չկրած մասի ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար.

9) այն անձանց նկատմամբ, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և որոնք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են փորձաշրջանի ընթացքում կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար.

10) ցմահ ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ:

10. Սույն հողվածի 1-5-րդ և 7-րդ մասերը կիրառվում են անձի նկատմամբ, եթե սույն հողվածի 9-րդ մասով այլ բան նախատեսված չէ:

### **Գ Լ ՈՒ Խ 3**

#### **ԵԶՐԱՓՈՎԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՑԹՆԵՐ**

#### **Հոդված 3. Օրենքի ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

#### **Հոդված 4. Օրենքի գործողությունը և կիրառման ապահովումը**

1. Համաներման կիրառումը չի ազատում դատարանների դատավճիռներով նշանակված լրացուցիչ պատիժներից:

2. Համաներման կիրառման դեպքում օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ տուժողին պատճառված վնասի հատուցման հարցը կարող է լուծվել Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

3. Համաներման կիրառման դեպքում դատվածության մարման հարցը լուծվում է օրենքով սահմանված կարգով:

4. Սույն օրենքը կիրառվում է արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը կիրառելուց հետո:

5. Հանցագործությունների և դատավճիռների համակցության դեպքերում համաներումը կիրառվում է վերջնական պատժի նկատմամբ՝ հանցագործությունների կամ դատավճիռների համակցության կանոններով այն սահմանելուց հետո: Սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կանոնները հանցագործությունների համակցության նկատմամբ կիրառվում են, եթե սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում մեղսագրվող արարքների համար նախատեսված առավելագույն պատիժների հանրագումարը չի գերազանցում չորս տարի ժամկետով ազատազրկումը, իսկ սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կամ 3-րդ կետով նախատեսված դեպքերում՝ վեց տարի ժամկետով ազատազրկումը:

6. Ազատազրկման վայրերում ակոհողամուրթությունից կամ թմրամուրթությունից հարկադիր բուժվող անձանց նկատմամբ համաներումը կիրառվում է բուժման համապատասխան կուրսն անցնելուց հետո:

7. Հաշմանդանության և տարիքային հիմքով համաներումը կիրառվում է այն անձանց նկատմամբ, որոնք առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ են ճանաչվել, կամ որոնց 60 տարին լրացել է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը:

8. Սույն օրենքի կատարումը վերապահել՝

1) դատարաններին՝

ա. այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը գտնվում են դատարաններում, սակայն մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը չեն քննվել, կամ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը քննվել են, բայց դատավճիռներն օրինական ուժի մեջ չեն մտել,

բ. այն անձանց նկատմամբ, որոնց հանդեպ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, կամ պատժի կրումը հետաձգվել է: Նշված անձանց նկատմամբ սույն օրենքի կիրառման հարցը լուծում է Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը՝ Արցախի Հանրապետության ոստիկանության քրեակատարողական վարչության քրեակատարողական տեսչության (այսուհետ՝ քրեակատարողական տեսչություն) միջնորդության հիման վրա.

2) Արցախի Հանրապետության Գերագույն դատարանին՝ Արցախի Հանրապետության դատարանների կողմից դատապարտված այն անձանց նկատմամբ, որոնք պատիժը կրում են Արցախի Հանրապետության սահմաններից դուրս.

3) հետաքննության և նախաքննության մարմիններին՝ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը կամ նյութերը քննում են նշված մարմինները.

4) քրեակատարողական հիմնարկի պետին՝ այն անձանց նկատմամբ, որոնք պատիժը կրում են քրեակատարողական հիմնարկում.

5) քրեակատարողական տեսչության պետին՝ այն անձանց նկատմամբ, ովքեր՝

ա. դատապարտվել են ազատությունից զրկելու հետ չկապված պատժի,

բ. պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել են, և նրանց վարքագծի նկատմամբ իրականացվում է վերահսկողություն:

9. Համաներում կիրառելու վերաբերյալ հետաքննության և նախաքննության մարմինների, քրեակատարողական հիմնարկի պետի, քրեակատարողական տեսչության պետի՝ համաներում կիրառելու վերաբերյալ ընդունված որոշումների օրինականության նկատմամբ հսկողությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

10. Սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված մարմինները համաներման ակտը պետք է կիրառեն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում: Եթե սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված մարմինների տրամադրության տակ առկա են համաներումը կիրառելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա այդ մարմինները

պարտավոր են համաներման ակտը կիրառել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր ժամկետի լրանալուն:

11. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության դեպքում համաներման կիրառման համար դատապարտյալի համաձայնությունը չի պահանջվում:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. հուլիսի 16  
Ստեփանակերտ  
ՀՕ-32-Ն



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**

**Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 93-րդ հոդվածի 7-րդ կետով՝ **ո թ ո շ ու մ ե մ**.

1. Ստեղծել Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր Ռազմավարական պլանավորման խորհուրդ (այսուհետ՝ Ռազմավարական պլանավորման խորհուրդ):

2. Հաստատել Ռազմավարական պլանավորման խորհրդի անհատական կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

3. Հաստատել Ռազմավարական պլանավորման խորհրդի գործունեության կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

4. Ռազմավարական պլանավորման խորհրդին՝

1) մեկամսյա ժամկետում մշակել և Հանրապետության Նախագահի հաստատմանը ներկայացնել ռազմավարական պլանավորման հայեցակարգը և ռազմավարական պլանավորման կարճաժամկետ ու երկարաժամկետ ծրագրերը.

2) ամիսը մեկ ներկայացնել հաշվետվություն ռազմավարական պլանավորման ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ:

5. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. հուլիսի 9  
Ստեփանակերտ  
ՆՀ-84-Ն

Հավելված N 1  
Արցախի Հանրապետության Նախագահի  
2020 թվականի հուլիսի 9-ի ՆՀ-84-Ն հրամանագրի

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ**  
**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԸՆԹԵՐ**  
**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

<b>Ռուղիկ Հյուսնունց</b>	Արցախի Հանրապետության Նախագահի գլխավոր խորհրդական-հատուկ հանձնարարություններով դեսպան (Ռազմավարական պլանավորման խորհրդի նախագահ)
<b>Դավիթ Բաբայան</b>	Արցախի Հանրապետության Նախագահի խորհրդական
<b>Արայիկ Լազարյան</b>	Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետ
<b>Ռոբերտ Ղահրամանյան</b>	Արցախի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար
<b>Լևոն Ղուլյան</b>	«Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամի գլխավոր տնօրեն:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**  
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Կ. ԴԱՆԻԵԼՅԱՆ**

**Կ Ա Ր Գ**  
**ԱՐՑԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ**  
**ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով կարգավորվում է Արցախի Հանրապետության Ռազմավարական պլանավորման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) գործունեությունը:

2. Խորհրդի գործունեությունն ուղղված է երկրի առաջիկա զարգացման նպատակների գիտական սահմանմանը և դրանց հասնելու իրական և արդյունավետ միջոցների մշակմանը:

3. Խորհրդի գործունեության հիմնական նպատակներն են՝ ռազմավարական պլանավորման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մշակումը, աջակցությունը Ծրագրի իրականացմանը, ինչպես նաև դրա կատարման ընթացքի մշտադիտարկումը, տնտեսության գերակա ոլորտների ռազմավարական պլանավորումը՝ նպաստելով Արցախի Հանրապետության պետական և մասնավոր հատվածների համագործակցությանը և կապերի խորացմանը:

**2. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

4. Խորհուրդը՝

1) մշակում և սահմանված կարգով Արցախի Հանրապետության նախագահի հաստատմանն է ներկայացնում ռազմավարական պլանավորման հայեցակարգը և կարճաժամկետ ու երկարաժամկետ ծրագրերը:

2) մշակում է Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

3) մշակում է տնտեսության գերակա ոլորտների զարգացման սկզբունքները:

4) առաջարկում է տեսական և գործնական մեթոդներ, որոնց միջոցով հիմնավորվում են տնտեսության գերակա ոլորտների զարգացման առաջնահերթությունները՝ ըստ ծրագրային բյուջետավորման սկզբունքի:

5) առաջարկում է մեթոդաբանական մոտեցումների կիրառում տնտեսության այլ ոլորտների զարգացման համար:

6) համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական և ոչ պետական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

7) իրականացնում է Խորհրդի նախագահին ներկայացվող Ծրագրի մաս կազմող տնտեսական, ֆինանսավարկային, բյուջետային, սոցիալական, առողջապահության, բնապահպանության, քաղաքաշինության, ընդերքօգտագործման, գիտության, կրթության, մշակույթի, ռազմահայրենասիրության, սպորտի և զբոսաշրջության ոլորտներին առնչվող փաստաթղթերի փորձաքննությունը:

8) կազմակերպում է Ծրագրի կատարման գործընթացը և իրականացնում է հսկողություն դրա նկատմամբ, պատրաստում հաշվետվություններ Ծրագրի ոլորտային ռազմավարությունների կատարման ընթացքի վերաբերյալ:

9) համակարգում է Ծրագրի փաստաթղթերի հաշվառման գործընթացը, այդ թվում՝ էլեկտրոնային շտեմարանների ձևավորման և վարման միջոցով:

10) իրականացնում է պետական մարմիններից ստացված ազդեցության գնահատումների նախնական ուսումնասիրություն: Խորը ուսումնասիրություն իրականացնելու նպատակով գնահատում է մասնագետների (փորձագետների) ներգրավման անհրաժեշտությունը:

11) հետևում է բարձրացված խնդիրների առնչությամբ տրված հանձնարարականների կատարման ընթացքին:

12) իրականացնում է խնդիրների կատարման և Ծրագրի կառուցակարգի արդյունավետության գնահատում:

13) ըստ անհրաժեշտության կարող է ստեղծել հանձնախմբեր, հանձնաժողովներ և աշխատանքային խմբեր, կազմավորել պատվիրակություններ:

14) իր աշխատանքներում կարող է ներգրավել մասնագետների (փորձագետների) և ստանալ մասնագիտական կարծիքներ. սույն կետում նշված գործառնությունների շրջանակներում այլ մասնագիտական օժանդակություն է ցուցաբերում Ծրագրի իրականացմանը:

5. Ծրագրի իրականացման նպատակով նախատեսվում է առաջադեմ տեխնոլոգիաների կիրառում բոլոր ներառյալ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման, արդյունաբերության, գյուղատնտեսության, կրթության, առողջապահության և այլ ոլորտներում:

6. Խորհուրդը կարգավորում է պետական քաղաքականության ցանկացած բաղադրիչ՝ հաշվի առնելով սոցիալ-տնտեսական զարգացմանը բնորոշ հետևյալ գործոնները՝

ա. տնտեսական և սոցիալական բաղադրիչների համաչափ զարգացում,

բ. կյանքի որակի բաղադրիչի ներդրում՝ երկարաժամկետ և կայուն արդյունքների հասնելու նպատակով:

7. Խորհուրդն իրականացնում է ռազմավարական պլանավորման հայեցակարգի համակարգային գնահատում, որի օգնությամբ կառավարման տարբեր մարմիններին և գերատեսչություններին հնարավորություն կընձեռվի մշակել տնտեսության զարգացման ոլորտային ռազմավարություններ՝ գերակա նպատակների հիմքում ունենալով ներքոնշյալ հիմնական ցուցանիշներն ըստ՝

ա. տնտեսության վիճակի,

բ. բնակչության կենսամակարդակի,

գ. տնտեսական ներուժի,

դ. սոցիալ-տնտեսական զարգացման,

ե. ապրանքաշրջանառության ծավալների:

8. Խորհուրդն իրականացնում է վերոնշյալ ցուցանիշների առանձին վերլուծություն և Ծրագրի կատարման ընթացքի մշտադիտարկում:

### **3. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

9. Խորհուրդը կազմված է հինգ անդամից: Խորհրդի անդամներին նշանակում և ազատում է Արցախի Հանրապետության Նախագահը:

10. Խորհրդի քարտուղարը նշանակվում է Խորհրդի որոշմամբ:

11. Խորհրդի գործունեությունն իրականացվում է հերթական նիստերի միջոցով:

12. Խորհրդի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա է Խորհրդի անդամների երկու երրորդը:

13. Խորհրդի հերթական նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ՝ ըստ անհրաժեշտության:

14. Խորհրդի նիստի օրակարգը և քննարկվելիք հարցերի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը Խորհրդի քարտուղարի կողմից Խորհրդի անդամներին են տրամադրվում ոչ ուշ, քան նիստից առնվազն երեք աշխատանքային օր առաջ, իսկ արտահերթ նիստի հրավիրման դեպքում՝ ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օր առաջ:

15. Խորհրդի նիստերը վարում է Խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա հանձնարարությամբ՝ Խորհրդի անդամներից մեկը:

16. Խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ Խորհրդի անդամների ձայների առնվազն երկու երրորդով:

17. Խորհրդի նախագահի հրավերով Խորհրդի նիստերին կարող են մասնակցել այլ անձինք՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

18. Խորհրդի նիստերն արձանագրում է Խորհրդի քարտուղարը: Արձանագրությունը և դրա քաղվածքները ստորագրում են նիստը նախագահողը և Խորհրդի քարտուղարը:

19. Խորհրդի նիստը կարող է անցկացվել հարցման կարգով: Այդ դեպքում Խորհրդի նիստի օրակարգը և քննարկվելիք հարցերի վերաբերյալ անհրաժեշտ նյութերը Խորհրդի անդամներին են ուղարկվում նիստից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ:

20. Խորհրդի նախագահը՝

1) ղեկավարում է Խորհրդի բնականոն գործունեությունը.

2) նախապատրաստում և նախագահում է Խորհրդի նիստերը.

3) ստորագրում է Խորհրդի նիստերի արձանագրությունները.

- 4) Խորհրդի անդամների միջև կատարում է աշխատանքի բաշխում.
- 5) խորհրդակցելով Խորհրդի իրավասու անդամի (անդամների) հետ՝ հանձնարարականներ է տալիս Խորհրդի կողմից ստեղծված հանձնախմբերին, հանձնաժողովներին, աշխատանքային խմբերին, պատվիրակություններին, Խորհրդի աշխատանքներում ներգրավված մասնագետներին:
21. Խորհրդի անդամը պարտավոր է՝
- 1) մասնակցել Խորհրդի նիստերին, իսկ դրանց ներկայանալու անհնարինության դեպքում ծանուցումը ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին տեղեկացնել Խորհրդի նախագահին.
  - 2) մշակել և ներկայացնել Խորհրդի որոշումների նախագծեր.
  - 3) անհրաժեշտության դեպքում մասնակցել աշխատանքային և ոլորտային խմբերի նիստերին.
  - 4) պահպանել Խորհրդի աշխատակարգի դրույթները, կատարել Խորհրդի որոշումները և ցուցումները:
22. Խորհրդի քարտուղարը պարտավոր է՝
- 1) նախապատրաստել Խորհրդի նիստի օրակարգի նյութերը և կազմակերպել դրանց տրամադրումը Խորհրդի անդամներին.
  - 2) ապահովել Խորհրդի որոշումների նախագծերի կազմումը.
  - 3) կազմակերպել Խորհրդի նիստերի արձանագրումը՝ թղթային և (կամ) էլեկտրոնային եղանակով.
  - 4) վարել Խորհրդի գործավարությունը.
  - 5) կազմակերպել Խորհրդի արձանագրությունների քաղվածքների տրամադրումը Խորհրդի անդամներին, Խորհրդի նախագահի հանձնարարությամբ՝ շահագրգիռ մարմիններին, անձանց և կազմակերպություններին.
  - 6) իրականացնել Խորհրդի գործունեության տեխնիկական ապահովումը, կազմակերպչական և ընթացիկ այլ աշխատանքներ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Կ.ԴԱՆԻԵԼՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ  
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՆՀ-107-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի «Արցախի Հանրապետության կառավարության կառուցվածքի սահմանումից բխող մի շարք միջոցառումների մասին» ՆՀ-107-Ն հրամանագրի (այսուհետ՝ հրամանագիր) 5-րդ կետով հաստատված՝ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կանոնադրությունում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 14-րդ կետի 1-ին, 17-րդ կետի 3-րդ ենթակետերից և 18-րդ կետից հանել «Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի քարտուղար,» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով.

2) 14-րդ կետի 1-ին, 17-րդ կետի 3-րդ ենթակետերից և 18-րդ կետից հանել «Արցախի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավար,» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով.

3) 14-րդ կետի 1-ին և 17-րդ կետի 3-րդ ենթակետերից, 39-րդ կետից հանել «Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի քարտուղարի տեղակալներ,» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով.

4) 14-րդ կետի 1-ին, 17-րդ կետի 3-րդ ենթակետերում, 18-րդ կետում, 19-րդ կետի 26-րդ ենթակետում և 39-րդ կետում «Արցախի Հանրապետության Նախագահի ներկայացուցիչներ՝ հատուկ հանձնարարությունների գծով» բառերից ու դրանց հոլովաձևերից հետո լրացնել «խորհրդատուներ,» բառը՝ համապատասխան հոլովաձևերով.

5) ուժը կորցրած ճանաչել 19-րդ կետի 8-րդ ենթակետը.

6) 5-րդ գլխի վերնագրից հանել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ,» և «ՎԵՐԱՀՄԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ,» բառերը.

7) ուժը կորցրած ճանաչել 24-րդ և 25-րդ կետերը.

8) 29-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 29.1-ին կետ՝ «29.1. Խորհրդատուները գործում են Արցախի Հանրապետության Նախագահի կողմից սահմանված կանոնակարգի համաձայն:».

9) ուժը կորցրած ճանաչել 32-րդ և 47-րդ կետերը:

2. Հրամանագրի 5-րդ կետով հաստատված՝ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառուցվածքում՝

1) ուժը կորցրած ճանաչել 2-րդ, 7-րդ, 13-րդ և 19-րդ կետերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-ին կետ՝

«12.1. Խորհրդատուներ:»:

3. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

2020թ. հուլիսի 10  
Ստեփանակերտ  
ՆՀ-85-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ  
ԱՊՐԻԼԻ 12-ԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԺԱՄԿԵՏԸ  
ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի ՆՀ-32-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Արցախի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19, այսուհետ նաև՝ վարակ) հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակը շարունակում է սպառնալ բնակչության կյանքին և առողջությանը և կարող է հանգեցնել անձանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման,

հիմք ընդունելով այն, որ 2020 թվականի ապրիլի 12-ին արտակարգ իրավիճակ հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքները դեռևս չեն վերացել, որի մասին են վկայում, մասնավորապես, 2020 թվականի հուլիսի 11-ի դրությամբ հաստատված կորոնավիրուսային հիվանդության 146 դեպքերը, որոնցից 119-ը՝ առողջացած (2020 թվականի ապրիլի 12-ից հետո դեպքերի թվի աճը կազմել է 140), ինչպես նաև այն, որ Արցախի Հանրապետությունում ու Հայաստանի Հանրապետությունում վարակի հետագա տարածումը և վարակի դեպքերի թվի աճը շարունակում է սպառնալ մարդկանց կյանքին ու առողջությանը,

հաշվի առնելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածով սահմանված՝ մարդու՝ որպես բարձրագույն արժեք հանդիսանալու սահմանադրական կարգավիճակը, ինչը պետությանը պարտավորեցնում է շարունակական միջոցներ ձեռնարկել անձանց կյանքի ու առողջության պաշտպանության համար, իսկ 2020 թվականի ապրիլի 12-ին հայտարարված արտակարգ իրավիճակի ընթացքում կիրառված միջոցառումներն ու սահմանափակումներն էական ազդեցություն են ունեցել վարակի տարածման դեպքերը նվազեցնելու գործում,

հիմք ընդունելով այն, որ Արցախի Հանրապետության Սահմանադրության 133-րդ հոդվածի ուժով Արցախի Հանրապետության Նախագահը լիազորված է երկարաձգել արտակարգ իրավիճակի ժամկետը, եթե արտակարգ իրավիճակ հայտարարելու հիմք ծառայած հանգամանքները չեն վերացել մինչև հայտարարված արտակարգ իրավիճակի ժամկետի ավարտը,

և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 93-րդ հոդվածի 20-րդ կետով և 133-րդ հոդվածի 1-ին մասով՝ **ո թ ո շ ու մ եմ**.

1. Երկարաձգել Արցախի Հանրապետությունում 2020 թվականի ապրիլի 12-ին հայտարարված և մինչև հուլիսի 11-ը երկարաձգված արտակարգ իրավիճակի ժամկետը 2020 թվականի հուլիսի 11-ից, ժամը 22:00-ից՝ 32 օրով՝ մինչև 2020 թվականի օգոստոսի 12-ը, ժամը 22:00-ն ներառյալ ժամկետով:

2. Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հրամանագրի 1-ին կետում «հուլիսի 11-ը, ժամը 22:00-ն» բառերը փոխարինել «օգոստոսի 12-ը, ժամը 22:00-ն» բառերով.

2) հրամանագրի հավելվածում՝

ա. 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17. Քրեակատարողական հիմնարկում և ձերբակալվածներին պահելու վայրերում՝

1) թույլատրվում է շաբաթական մեկ անգամ մեկ հանձնուքի, ծանրոցի կամ փաթեթի ստանալը կամ ուղարկելը.

2) արգելվում է տեսակցություններ ունենալը (բացառությամբ տեսազանգից օգտվելու դեպքերի).

3) արգելվում է կրոնական ծեսերի կազմակերպումը և դրանց մասնակցելը:»,

բ. 28-րդ կետում «այդ թվում՝» բառերը փոխարինել «բացառությամբ» բառով:

3. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. հունիսի 11  
Ստեփանակերտ  
ՆՀ-86-Ն



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ՆԿ-9-Ն ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» ՆԿ-9-Ն կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) կարգադրության հավելվածից հանել հետևյալ քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը՝

«Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի վարիչի պաշտոնի անձնագիր N 2».

«Արցախի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարի տեղակալի պաշտոնի անձնագիր N 3».

«Արցախի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ծրագրերի վերահսկողության բաժնի վարիչի պաշտոնի անձնագիր N 4».

«Արցախի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության հանձնարարականների վերահսկողության բաժնի վարիչի պաշտոնի անձնագիր N 5».

«Արցախի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության իրավական վերլուծությունների բաժնի վարիչի պաշտոնի անձնագիր N 6».

«Արցախի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ծրագրերի վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնի անձնագիր N 19».

«Արցախի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության հանձնարարականների վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնի անձնագիր N 20».

«Արցախի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության հանձնարարականների վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնի անձնագիր N 20.1».

«Արցախի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության իրավական վերլուծությունների բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնի անձնագիր N 21».

«Արցախի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության իրավական վերլուծությունների բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնի անձնագիր N 22».

«Արցախի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության հանձնարարականների վերահսկողության բաժնի առաջատար մասնագետի պաշտոնի անձնագիր N 38».

«Արցախի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության իրավական վերլուծությունների բաժնի առաջատար մասնագետի պաշտոնի անձնագիր N 39».

2) կարգադրության հավելվածը լրացնել հետևյալ քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերով՝

«Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի պետաիրավական վարչության պետի պաշտոնի անձնագիր N 1.1»

«Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի վարիչի պաշտոնի անձնագիր N 18.1»:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2020թ. հուլիսի 11  
Ստեփանակերտ  
ՆԿ-3-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

8 հուլիսի 2020թ.

N 179-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 384 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Քոասնիի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,12 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Քոասնիի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

8 հուլիսի 2020թ.

N 180-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 384 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Քռասնիի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,11232 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Քռասնիի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

8 հունիսի 2020թ.

N 181-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առ ոչ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Խրամորթի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նպատակային նշանակության 3,59 հեկտար արոտավայրը, համաձայն հավելվածի, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ ընդերքի օգտագործման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

14 հունիսի 2020 թ.

N 200-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1) Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 7-ի «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության կանոնադրությունը, կառուցվածքը և աշխատողների թիվը հաստատելու ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 29-ի N 344-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) 8-րդ կետում «տնօրենից» բառից հետո լրացնել «, տնօրենի առաջին տեղակալից,» բառերը.

2) 14-րդ կետում «ունի» բառից հետո լրացնել «առաջին տեղակալ և» բառերը.

3) 17-րդ կետի 10-րդ ենթակետում «իր» բառից հետո լրացնել «առաջին տեղակալի,» բառերը.

4) 18-րդ կետում «տեղակալներից» բառից առաջ լրացնել «առաջին տեղակալը կամ» բառերը.

5) 19-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«19. Ծառայության տնօրենի առաջին տեղակալը և տեղակալները՝

1) համակարգում են ծառայության համակարգի աշխատանքները՝ ծառայությանը վերապահված քաղաքականության իրականացման իրենց հանձնարարված բնագավառներում.

2) իրենց լիազորությունների սահմաններում համակարգում են ծառայության իրենց հանձնարարված բնագավառներում քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացումը՝ ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների և ծառայության կառավարման ոլորտում գործող կազմակերպությունների միջոցով՝ տալով ցուցումներ ու հանձնարարականներ.

3) ծառայության նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ իրականացնում են իրենց հանձնարարված բնագավառների ծառայության համակարգի մարմիններին որոշակի հանձնարարականների և առաջադրանքների սահմանում, դրանց կատարման նկատմամբ վերահսկողություն.

4) ծառայության տնօրենի հանձնարարությամբ իրականացնում են ծառայության տնօրենի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումները.

5) համակարգում են իրենց հանձնարարված բնագավառներում ծառայության համակարգի մարմինների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը.

6) իրենց լիազորությունների սահմաններում համագործակցում են պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների և հիմնարկների հետ.

7) իրենց հանձնարարված բնագավառներում համակարգում են համապատասխան զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները.

8) պարբերաբար ծառայության տնօրենին են ներկայացնում տեղեկատվություն իրենց հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի մասին.

9) ապահովում են իրենց հանձնարարված բնագավառներում ծառայության տնօրենի հրամանների և ցուցումների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին տեղեկացնում ծառայության տնօրենին.

10) ծառայության տնօրենին ներկայացնում են առաջարկություններ իրենց իրավասությանը վերաբերող հարցերի մասին.

11) ծառայության տնօրենի հանձնարարությամբ իրականացնում են Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«07» հուլիսի 2020թ.

N 102

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍԻ  
ԱՎՏՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ  
ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱՂՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ  
ՏՐԱՄԱՂԵԼՈՒ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 06-ի N360-ՏՆ եզրակացությունը՝

**Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ՝**

**1. Տրամադրել՝ ֆիզիկական անձ Կարեն Վալերիի Հակոբյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00753 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր:

**2. Դադարեցնել՝**

**1) անհատ ձեռնարկատեր Կարեն Կառլենի Նարիմանյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00074 լիցենզիայի և լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունները.

**2) ֆիզիկական անձ Ենոք Բագրատի Ղահրամանյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00517 լիցենզիայի և լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունները.

**3) ֆիզիկական անձ Արտաշես Աշոտի Մելքումյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00615 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

**4) ֆիզիկական անձ Արթուր Սերգեյի Միքայելյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման



գործունեության ՏՄՆ00626 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները:

3. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ  
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

2020 թվականի հուլիսի 9-ի

**ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ  
ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 5-Ն

**ՀՐԱՄԱՆ**

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» օրենքի 10-րդ հոդվածի երկրորդ մասի «դ» կետով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Սահմանել փոստային վճարման պետական նշանի նմուշները՝ «Արցախի տեսարժան վայրեր» թեմայով հինգ նամականիշ՝ համաձայն NN 1, 2, 3, 4 և 5 հավելվածների:

2. Գործողության մեջ դնել՝ «Արցախի տեսարժան վայրեր» թեմայով հինգ նամականիշ՝ սահմանելով համապատասխանաբար անվանագինը՝ 200 ՀՀ դրամ, 400 ՀՀ դրամ, 500 ՀՀ դրամ, 550 ՀՀ դրամ, 650 ՀՀ դրամ, ընդհանուր տպաքանակը՝ 5000 հատ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

9 հուլիսի 2020 թվական  
ք. Ստեփանակերտ

Հավելված N 1  
Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի  
և արտադրական ենթակառուցվածքների  
նախարարի 2020 թվականի հուլիսի 9-ի  
N 5-Ն հրամանի



Հավելված N 2  
Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի  
և արտադրական ենթակառուցվածքների  
նախարարի 2020 թվականի հուլիսի 9-ի  
N 5-Ն հրամանի



Հավելված N 3  
Արցախի Հանրապետության էկոնոմիկայի  
և արտադրական ենթակառուցվածքների  
նախարարի 2020 թվականի հուլիսի 9-ի  
N 5-Ն հրամանի



Հավելված N 4  
Արցախի Հանրապետության էկոնոմիկայի  
և արտադրական ենթակառուցվածքների  
նախարարի 2020 թվականի հուլիսի 9-ի  
N 5-Ն հրամանի



Հավելված N 5  
Արցախի Հանրապետության էկոնոմիկայի  
և արտադրական ենթակառուցվածքների  
նախարարի 2020 թվականի հուլիսի 9-ի  
N 5-Ն հրամանի



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ  
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

2020 թվականի հուլիսի 9-ի

**ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԻ ՆՄՈՒՇԸ  
ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 6-Ն

**ՀՐԱՄԱՆ**

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» օրենքի 10-րդ հոդվածի երկրորդ մասի «դ» կետով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Սահմանել փոստային վճարման պետական նշանի նմուշը՝ «Մեծանուն հայեր» շարքից «Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի ծննդյան 200-ամյակը» թեմայով մեկ նամականիշ՝ համաձայն հավելվածի:

2. Գործողության մեջ դնել՝ «Մեծանուն հայեր» շարքից «Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի ծննդյան 200-ամյակը» թեմայով մեկ նամականիշ՝ սահմանելով համապատասխանաբար անվանագինը՝ 230 ՀՀ դրամ, տպաքանակը՝ 8000 հատ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

9 հուլիսի 2020 թվական  
ք. Ստեփանակերտ

Հավելված  
Արցախի Հանրապետության էկոնոմիկայի  
և արտադրական ենթակառուցվածքների  
նախարարի 2020 թվականի հուլիսի 9-ի  
N 6-Ն հրամանի



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

**2020 թվականի հուլիսի 16-ի**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ  
ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ  
2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի N 4-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**N 17-Ն**

**ՀՐԱՄԱՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2014 թվականի հունվարի 22-ի «Հարկային մարմին հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու մասին պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու մասին» N 4-Ն հրամանով սահմանված հավելվածի առաջին նախադասության մեջ «Ֆինանսների նախարարությունը» բառերը փոխարինել «պետական եկամուտների կոմիտեն» բառերով, իսկ «Ֆինանսների նախարարի» բառերը՝ «պետական եկամուտների կոմիտեի նախագահի» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ  
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Դ. ՊՈՂՈՍՅԱՆ**

**2020 թվականի հուլիսի 16  
ք. Ստեփանակերտ**



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**2020 թվականի հուլիսի 17-ի**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ  
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 135-Ն ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ  
ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**N 3-Ն**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության պետի 2008 թվականի սեպտեմբերի 15-ի «Անձնագրային գործողությունների կարգի պարզաբանումները հաստատելու մասին» N 135-Ն հրամանը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ**

**2020 թվականի հուլիսի 17  
ք. Ստեփանակերտ**

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

12 հունիսի 2020թ.

N 182-

Ա

ք. Ստեփանակերտ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի 11.06.2020թ. եզրակացությունը (կցվում է) և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի երրորդ պարբերության պահանջներով,

հ Ր ա մ ա յ ու մ ե մ`

1. Ներքոնշյալ ընկերությանը տրամադրել լիցենզիա` ԱՀ տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու համար:

N	Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը	Գործունեության տեսակը
1	«ԱՐՄ ՇԻՆ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ ք. Ստեփ, Կոունյանցների 46	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի` <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակարանային կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի պետ Ս. Դուլյանի վրա:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

22 հունիսի 2020թ.

**N 185-Ա**

ք. Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի **18.06.2020թ.** եզրակացությունը (կցվում է) և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ԼԴՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի երրորդ պարբերության պահանջներով,

**հ ր ա մ ա յ ու մ ե մ`**

1.Ներքոնշյալ ընկերություններին տրամադրել լիցենզիաներ` ԱՀ տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու համար:

<b>N</b>	<b>Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը</b>	<b>Գործունեության տեսակը</b>
1	«ԿՈՄՖՈՐՏԵԻՆ» ՍՊԸ ք. Մարտակերտ, Դանիելյան 7	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի` <b>բնակելի, հասարակական և արտադրական</b>
	«ՀԵՐԻՏԱԺ» ՍՊԸ ք. Շուշի, Մաշտոցի փողոց, տուն 49/1	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի` <b>բնակելի, հասարակական և արտադրական</b>
	«ՀՈՎԻԿ ՄԱՅԻՆՅԱՆ» ԱԶ ք. Ստեփ, Գր. Լուսավորիչ փող, տուն 81	Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն, ըստ հետևյալ ոլորտի` <b>բնակելի, հասարակական և արտադրական</b>

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակարանային կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի պետ Ս. Դուլյանի վրա:

**ՆԱԽԱՐԱՐ**

**Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԵՐԱԳՈՒՑՆ ԴՍԱՐԱՆ**

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում Սնանկության գործ ԸԻԴ/0006/04/20  
Սնանկության գործ ԸԻԴ/0006/04/20  
Նախագահող դատավոր՝ Ն.Գրիգորյան  
Դատավորներ՝ Ա.Հայրապետյան  
Կ.Սադյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ 03-ին հուլիսի 2020 թվական

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝  
Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ մասնակցությամբ՝ դատավորներ՝	Ն.Նարիմանյանի Հ.Աբրահամյանի Գ.Գրիգորյանի Հ.Խաչատրյանի Կ.Ղարայանի
--	--

առանց դատական նիստ հրավիրելու քննության առնելով ըստ հայցի  
Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության ընդդեմ  
«Հ.Է.Կ.ՇԻՆ» փակ բաժնետիրական ընկերության՝ պարտապանին սնանկ  
ճանաչելու պահանջի վերաբերյալ ԸԻԴ/0006/04/20 սնանկության գործով  
Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2020 թվականի հունիսի  
09-ի որոշման դեմ «Հ.Է.Կ.ՇԻՆ» փակ բաժնետիրական ընկերության  
ներկայացուցիչ Լաերտ Գևորգյանի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը**

Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունը  
(այսուհետ՝ Հայցվոր) 2020 թվականի փետրվարի 20-ին հայցադիմում է  
ներկայացրել Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության  
առաջին ատյանի դատարան (այսուհետ, նաև՝ Առաջին ատյանի դատարան)  
պարտապան «Հ.Է.Կ. ՇԻՆ» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ,  
նաև Ընկերություն) սնանկ ճանաչելու մասին պահանջով:

Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի փետրվարի 21-ի  
որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Նույն օրը կայացրած մեկ այլ որոշմամբ Առաջին ատյանի դատարանն  
անհատ ձեռնարկատեր Արմեն Հրանտի Խաչատրյանին նշանակել է  
Ընկերության սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ:

Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի մարտի 30-ի վճռով  
Հայցվորի դիմումը բավարարվել է և Ընկերությունը ճանաչվել սնանկ:

Ընկերության ներկայացուցիչ Լ.Գևորգյանը նշված վճռի դեմ 2020  
թվականի ապրիլի 27-ին վերաքննիչ բողոք է բերել:

Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի (այսուհետ՝  
Վերաքննիչ դատարան) 2020 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ վերաքննիչ  
բողոքը՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի  
1-ին մասի 2-րդ կետի հիմքով վերադարձվել է՝ այն օրենքով սահմանված  
ժամկետը լրանալուց հետո բերված և ժամկետի բացթողումը հարգելի  
համարելու միջնորդություն ներկայացված չլինելու հիմնավորմամբ:

Ընկերության ներկայացուցիչ Լ.Գևորգյանը 2020 թվականի մայիսի 13-ին նշված որոշման դեմ Գերագույն դատարան է ներկայացրել վճռաբեկ բողոք, իսկ 2020 թվականի մայիսի 27-ին՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին դիմում:

Գերագույն դատարանի 2020 թվականի մայիսի 27-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության:

2020 թվականի մայիսի 27-ին Վերաքննիչ դատարան է մուտք գործել Ընկերության ներկայացուցիչ Լ.Գևորգյանի «նոր հանգամանքով վերաքննիչ բողոք» վերտառությամբ փաստաթուղթը, որով խնդրվում է հարգելի համարել և վերականգնել վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված բաց թողնված դատավարական ժամկետը և վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ:

Մասնկության գործը Վերաքննիչ դատարանի դատական կազմին է հանձնվել 2020 թվականի հունիսի 08-ին:

Վերաքննիչ դատարանի 2020 թվականի հունիսի 09-ի որոշմամբ Ընկերության ներկայացուցիչ Լ.Գևորգյանի միջնորդությունը մերժվել է, իսկ վերաքննիչ բողոքը՝ վերադարձվել:

Նշված որոշման դեմ Ընկերության ներկայացուցիչ Լ.Գևորգյանը 2020 թվականի հունիսի 15-ին ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտը վերացնելու խնդրանքով:

Գերագույն դատարանի 2020 թվականի հունիսի 23-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն առերևույթ խախտել է ԱՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ, 71-րդ, 223-րդ հոդվածները, «Մասնկության մասին» ԼՂՀ օրենքի 30-րդ հոդվածը:

Նշված պնդումը բողոքաբերը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանն անտեսելով, որ դատավարական ժամկետը բաց է թողնվել բողոք բերողի կամքից անկախ հանգամանքների բերումով, բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը մերժել է և վերաքննիչ բողոքը վերադարձրել՝ սահմանափակելով սնանկությունը վիճարկելու հնարավորությունը, քանի որ վերաքննիչ բողոքին կից ներկայացված գրավոր ապացույցներով հիմնավորվում է, որ Ընկերությունն ունի բավարար ակտիվներ, որոնք ավելին են, քան պարտավորության գումարը:

Նշվածը, ըստ բողոքաբերի, հնարավորություն է տալիս պնդել, որ սույն գործով անհրաժեշտ է Գերագույն դատարանի որոշումը՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու առումով:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է վճռաբեկ բողոքն ընդունել վարույթ և վերացնել Վերաքննիչ դատարանի ԸԻԴ 0006/04/20 սնանկության գործով 2020 թվականի հունիսի 09-ի որոշումը:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի մարտի 30-ի վճռով Հայցվորի դիմումը բավարարվել է և Ընկերությունը ճանաչվել սնանկ:

2. Մասնկության վերաբերյալ վճիռն Ընկերությանը հասանելի է դարձել 2020 թվականի ապրիլի 04-ին:

3. Ընկերության ներկայացուցիչ Լ.Գևորգյանը, փոստային ծառայության միջոցով, 2020 թվականի ապրիլի 20-ին ներկայացրել է վերաքննիչ բողոք:

4. Վերաքննիչ դատարանը 2020 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ ներկայացված բողոքը վերադարձրել է՝ բողոքարկման ժամկետը բաց թողնված լինելու և այն վերականգնելու վերաբերյալ միջնորդություն ներկայացված չլինելու հիմնավորմամբ:

5. Ընկերության ներկայացուցիչ Լ.Գևորգյանը Վերաքննիչ դատարանի որոշումը ստացել է 2020 թվականի մայիսի 05-ին և նույն ամսի 13-ին ներկայացրել է վճարեկ բողոք:

6. Ընկերության ներկայացուցիչ Լ.Գևորգյանը 2020 թվականի մայիսի 27-ին դիմել է Գերագույն դատարան, խնդրելով վերադարձնել իր կողմից ներկայացված վճարեկ բողոքը:

7. Գերագույն դատարանի 2020 թվականի մայիսի 27-ի որոշմամբ Ընկերության ներկայացուցիչ Լ.Գևորգյանի վճարեկ բողոքը թողնվել է առանց քննության:

8. Ընկերության ներկայացուցիչ Լ.Գևորգյանը 2020 թվականի մայիսի 27-ին վերաքննիչ բողոք է ներկայացրել Վերաքննիչ դատարան, որում ներառել է նաև բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը:

9. Վերաքննիչ դատարանը մերժել է ներկայացված միջնորդությունը, իսկ վերաքննիչ բողոքը՝ վերադարձրել, արձանագրելով, որ իրավունքի ուժով Ընկերության վերաքննիչ բողոքը կարող էր վարույթ ընդունվել, եթե այն ներկայացված լիներ մինչև 2020 թվականի ապրիլի 20-ը՝ ներառյալ, և պարունակեր կամ նրան կցված լիներ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը:

#### **4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճարեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար և բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ առկա է իրավունքի զարգացման խնդիր, մասնավորապես՝ կապված դատավարական ժամկետների վերականգնման հարցի հետ:

ԱՀ Մահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

ԱՀ Մահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Արդար դատաքննության իրավունքը մարդու՝ դատական պաշտպանության իրավունքի իրականացումն ապահովելուն ուղղված միջազգային և ներպետական նորմերով ամրագրված և երաշխավորվող սուբյեկտիվ դատավարական իրավունքների համակցություն է, որը յուրաքանչյուրին ապահովում է օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անկողմնակալ դատարան՝ առանց խոչընդոտի, դիմելը, երաշխավորում է գործի քննությունը հրապարակայնության, կողմերի հավասարության և

մրցակցության պայմաններում իրականացվելը, ապահովում է հիմնավորված դատական ակտ ստանալը, ինչպես նաև երաշխավորում է դատական պաշտպանության իրավունքի խախտմանը հանգեցնող արդար դատաքննության իրավունքի մաս կազմող որևէ իրավունքի խախտման վերացման հնարավորությունը:

Դատական պաշտպանության իրավունքը ենթադրում է նախնառաջ խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության և վերականգնման պահանջով դատարան դիմելու անձի իրավունքը, իսկ մյուս կողմից՝ դատարանի պարտականությունը՝ քննելու գործը և նրանով կայացնելու օրինական և հիմնավորված որոշում: Խախտված իրավունքի պաշտպանության պահանջով յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի դիմելու դատարան: Ընդ որում՝ քաղաքացիական շրջանառության մասնակիցներն առաջին ատյանի դատարան են դիմում հայցադիմում (դիմում) ներկայացնելու միջոցով: Հետևաբար, դատարան դիմելու իրավունքն ուղղակիորեն բխում է անձի դատական պաշտպանության իրավունքի բովանդակությունից, որն ապահովելու պարտականությունն ընկնում է պետության վրա:

Գերագույն դատարանը փաստում է, որ Արցախի Հանրապետությունում երաշխավորված են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների փաստացի իրականացմանը:

Գերագույն դատարանը հարկ է համարում նշել, որ անձի բողոքարկման իրավունքը պետք է ուղեկցվի բավարար երաշխիքներով, որոնք հնարավորություն կտան դատական ակտը բողոքարկող անձանց արդյունավետ օգտվելու վերադաս ատյանի մատչելիությունից, ներառյալ նրանց կողմից հիմնավոր բողոքներ ներկայացնելու հնարավորության տրամադրումը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի համաձայն՝ բողոքարկման ժամկետներին վերաբերող նորմերը անկասկած սահմանված են արդարադատության պատշաճ իրականացման և իրավական որոշակիության սկզբունքի ապահովման նպատակով, սակայն հիշյալ նորմերը կամ դրանց կիրառումը չպետք է գործին մասնակցող անձին զրկեն իրենց իրավունքի իրականացման հնարավորությունից (տես՝ *Pérez de Rada Cavanilles v. Spain*, application, թիվ 116/1997/900/1112 գանգատով ՄԻԵԴ, 28.10.1998 թվականի վճիռը, կետ 45): Որպեսզի դատարանի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ, անձը պետք է իր իրավունքների իրականացմանը միջամտող իրավական ակտը վիճարկելու հստակ և իրական հնարավորություն ունենա (տես *u Bellet v. France*, 04.12.1995 թվականի վճիռը, կետ 36, Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի 16.03.2010 թվականի վճիռը, կետ 25):

Դիմումների, բողոքների կամ այլ գանգատների ներկայացման համար սահմանված ժամկետները, անկասկած, նպատակ ունեն ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը և համապատասխանությունը, մասնավորապես, իրավական որոշակիության սկզբունքին: Շահագրգիռ անձինք պետք է ակնկալեն, որ այդ կանոնները կկիրառվեն: Սակայն, նման կանոնները կամ դրանց կիրառումը չպետք է խոչընդոտ հանդիսանան դատավարության մասնակիցների համար առկա պաշտպանության միջոցներից օգտվելիս (տես *u Perez de Rada Cavanilles v. Spain*, 28.10.1998 թվականի վճիռը, կետ 45, Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի 16.03.2010 թվականի վճիռը, կետ 27):

Գերագույն դատարանն արձանագրում է, որ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ սնանկության գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված է տասնհինգօրյա ժամկետ: Այդ ժամկետում վերաքննիչ բողոք բերելու իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականացման համար օրենքն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին պարտավորեցնում է վճիռը հրապարակվելուց անմիջապես հետո դրա օրինակը հանձնել գործին մասնակցած անձանց, իսկ նրանցից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկել նրան: Միաժամանակ այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը բաց է թողնում վերոգրյալ ժամկետը, վերջինս իրավունք ունի ներկայացնել դրա բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն, որի քննարկումը վերաքննիչ դատարանը պարտավոր է իրականացնել՝ հաշվի առնելով նաև անձի՝ սահմանադրական նորմով երաշխավորված դատական և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դատարանը, գործին մասնակցող անձի դիմումի հիման վրա, նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի ճանաչելու դեպքում, վերականգնում է բաց թողնված ժամկետը:

Գերագույն դատարանը՝ դատավարական ժամկետի վերականգնման առնչությամբ ԸԻԴ/1647/02/17 քաղաքացիական գործով 2017 թվականի դեկտեմբերի 15-ի կայացրած որոշումը արձանագրել է հետևյալը. «Առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված է մեկամսյա ժամկետ: Այդ ժամկետում վերաքննիչ բողոք բերելու իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականացման համար օրենքն Առաջին ատյանի դատարանին պարտավորեցնում է վճռի հրապարակումից անմիջապես հետո դրա օրինակը հանձնել գործին մասնակցած անձանց, իսկ նրանցից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում՝ հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկել նրան: Միաժամանակ, այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը բաց է թողնում վերոգրյալ ժամկետը, վերջինս իրավունք ունի ներկայացնել դրա բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն, որի քննարկումը վերաքննիչ դատարանը պարտավոր է իրականացնել՝ հաշվի առնելով նաև անձի՝ սահմանադրական նորմով երաշխավորված դատական պաշտպանության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները»:

Մեկ այլ ԸԻԴ/0003/05/14 վարչական գործով 2016 թվականի մարտի 11-ին կայացրած որոշումը Գերագույն դատարանն արձանագրել է. «... բոլոր այն դեպքերում, երբ ժամկետը բաց է թողնվել բողոք բերողի կամ քից անկախ պատճառներով /հիվանդություն, անգրագիտություն, անհաղթահարելի ուժ, դատական քննությանը հարգելի պատճառներով չմասնակցելը, դատական ակտի կայացման օրվա մասին անտեղյակ լինելը և այլն/, ժամկետի բաց թողումը պետք է ճանաչել հարգելի: Դա հավասարապես վերաբերում է նաև այն դեպքերին, երբ ժամկետը բաց է թողնվել դատարանի կողմից դատական ակտի պատճենն օրենքով նախատեսված ժամկետից ավելի ուշ կողմին հանձնելու պատճառով»:

Զարգացնելով նախկինում արտահայտած դիրքորոշումները, Գերագույն դատարանն ամրագրում է, որ այն դեպքում, երբ բողոքարկման իրավունքի իրացման ժամկետի բացթողումը պայմանավորված է ստորադաս դատարանի անգործությամբ, բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու հարցը քննարկելիս վերադաս դատարանը պետք է առաջնորդվի անձի՝ իր իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու և դրա



մատչելիության սկզբունքներով: Ըստ այդմ՝ Գերագույն դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառ է հանդիսանում համապատասխան բողոքարկվող դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը, ապա բողոքաբերը պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները, իսկ վերադաս դատարանը՝ տվյալ հանգամանքի հաշվառմամբ բավարարի ներկայացված միջնորդությունը: Այդ դեպքում բաց թողնված ժամկետը վերականգնվում է իրավունքի ուժով (ex jure)՝ համապատասխան դատական ակտում այդ մասին փաստելով:

Միաժամանակ, Գերագույն դատարանն արձանագրում է, որ վերը նշված դատավարական ժամկետը պարտադիր և աներկբա վերականգնելու դատարանի պարտականությունից զատ, գործող օրենսդրությունը նախատեսել է նաև դատավարական ժամկետը վերականգնելու դատարանի հայեցողական լիբերությունը ևս: Սակայն դատական հայեցողությունը պետք է իրականացվի ոչ թե կամայական, այլ օրենքի շրջանակներում: Բաց թողնված ժամկետը վերականգնելու հարցում վճռորոշը պատճառների հարգելիությունն է, որը ելակետային է համարվում դատարանի կողմից որոշում կայացնելիս:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը՝ նկատի ունենալով հասարակական հարաբերությունների խիստ բազմազանությունը և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում փաստական հանգամանքների ինքնատիպությունը, չի կարող սպառնիչ սահմանել, թե որ դեպքերում է դատարանը պարտավոր բաց թողնված ժամկետը հարգելի համարել: Որպես կանոն, հարգելի պետք է համարել այն դեպքերը, երբ անձն օրյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել օրենքով սահմանված ժամկետում բողոք ներկայացնել:

Նշվածներն արտածելով սույն գործի փաստական հանգամանքների վրա, Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

Ինչպես հետևում է սույն գործի նյութերից՝ Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի մարտի 30-ի վճռով Հայցվորի դիմումը բավարարվել է և Ընկերությունը ճանաչվել սնանկ: Մնանկության վերաբերյալ վճիռն Ընկերությանը հասանելի է դարձել 2020 թվականի ապրիլի 04-ին, և Ընկերության ներկայացուցիչ Լ.Գևորգյանը, փոստային ծառայության միջոցով, 2020 թվականի ապրիլի 20-ին ներկայացրել է վերաքննիչ բողոք: Վերաքննիչ դատարանը 2020 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ ներկայացված բողոքը վերադարձրել է՝ բողոքարկման ժամկետը բաց թողնված լինելու և այն վերականգնելու վերաբերյալ միջնորդություն ներկայացված չլինելու հիմնավորմամբ:

Կրիկին անգամ ներկայացված վերաքննիչ բողոքի պարագայում, Վերաքննիչ դատարանը մերժել է ներկայացված միջնորդությունը, իսկ վերաքննիչ բողոքը՝ վերադարձրել, արձանագրելով, որ իրավունքի ուժով Ընկերության վերաքննիչ բողոքը կարող էր վարույթ ընդունվել, եթե այն ներկայացված լիներ մինչև 2020 թվականի ապրիլի 20-ը՝ ներառյալ և պարունակեր կամ նրան կցված լիներ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ միանգամայն հիմնավոր է Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշումը, թե 2020 թվականի ապրիլի 20-ին Ընկերության ներկայացրած վերաքննիչ բողոքը՝ դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն պարունակելու կամ այն բողոքին կից ներկայացված լինելու պարագայում, աներկբա հիմք կհանդիսանար դատավարական ժամկետը վերականգնելու և բողոքը վարույթ ընդունելու համար: Այնուհանդերձ, Գերագույն դատարանը գտնում է, որ անձի բողոքարկման իրավունքի բավարար չափով երաշխավորման տեսակետից

պետք է բացառել բողոքարկվող դատական ակտի՝ բողոքաբերի կամքից անկախ ուշ ստանալու փաստի արձանագրումով հանդերձ, անձին դատական պաշտպանություն չտրամադրելու դեպքերն այն պարագայում, երբ միջնորդություն ներկայացված չլինելու հիմնավորմամբ բողոքը վերադարձվելուց հետո բողոքաբերը ողջամիտ ժամկետում կրկին բողոք է ներկայացնում՝ կցելով պահանջվող միջնորդությունը: Ընդ որում, ժամկետի ողջամտության գնահատականը պետք է տա դատարանը՝ յուրաքանչյուր կոնկրետ միջնորդության քննարկման շրջանակներում:

Վերոգրյալների հաշվառմամբ գնահատելով բողոքաբերի փաստարկները, Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը՝

Ընկերության ներկայացուցիչ Լ.Գևորգյանը Վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը ստացել է 2020 թվականի մայիսի 05-ին, նույն ամսի 13-ին ներկայացրել վճռաբեկ բողոք, իսկ մայիսի 27-ին դիմել Գերագույն դատարան, խնդրելով վերադարձնել իր կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը և վերաքննիչ բողոք ներկայացրել Վերաքննիչ դատարան, որում ներառել է նաև բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը: Այսինքն, բողոքաբերի գործողությունները վերաքննիչ բողոքը համապատասխան միջնորդությամբ կրկին ներկայացնելու առումով, լիովին ընդգրկվում են ողջամիտ ժամկետի սահմաններում, քանի որ բողոքը վերադարձնելու մասին դատական ակտի ստացման և կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու միջև առկա ժամկետային խզումը պայմանավորված է անձի դատական պաշտպանություն ստանալու ուղղությամբ ձեռնարկած ակտիվ քայլերի և դրանց արդյունքում՝ օբեկտիվորեն վրա հասնող ժամկետային դադարներով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերաքննիչ բողոքը՝ համապատասխան միջնորդությամբ, կրկին ներկայացվել է ողջամիտ ժամկետում, Գերագույն դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է հարգելի համարել դատավարական ժամկետը բաց թողնելու Ընկերության ներկայացրած պատճառները: Հետևաբար, դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը պետք է բավարարվեր, ինչը չանելով և վերաքննիչ բողոքը վերադարձնելով Վերաքննիչ դատարանը սահմանափակել է Ընկերության՝ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածներով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 2-րդ մասով, Գերագույն դատարանը՝

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1.Վճռաբեկ բողոքը բավարարել: Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2020 թվականի հունիսի 09-ի որոշումը վերացնել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն

**Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ  
Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ  
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ  
Կ.ՂԱՐԱՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՐԱԳՈՒՑՆ ԴՍՏԱՐԱՆ**

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում ֆրեական նյութ ՇԻԴ/0027/11/19  
 Ֆրեական նյութ ՇԻԴ/0027/11/19  
 Նախագահող դատավոր՝ Հ. Գրիգորյան  
 Դատավորներ՝ Լ. Ավանեսյան  
 Ն. Գրիգորյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք. Ստեփանակերտ

30-ին հունիսի 2020 թ.

ԱՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝  
 մասնակցությամբ՝ դատավորներ՝

Ն. Նարիմանյանի  
 Գ. Գրիգորյանի  
 Հ. Աբրահամյանի  
 Հ. Խաչատրյանի  
 Ի. Կարապետյանի

դռնբաց դատական նիստում, քննելով քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին քննիչի որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին դատախազի որոշման դեմ բողոքով ՇԻԴ/0027/11/19 քրեական նյութով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2020թ. մայիսի 19-ի որոշման դեմ ԱՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

ԱՀ ոստիկանության Մարտունու շրջբաժնի տեղամասային տեսուչ Է. Հարությունյանի 2019թ. օգոստոսի 3-ի որոշմամբ հարուցվել է թիվ 173013.19 քրեական գործը՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով՝ Հ. Ավանեսյանի կողմից իր երեխաներին դատարանի վճռով սահմանված պիմենտի վճարումից երեք ամսից ավելի չարամտորեն խուսափելու առիթով:

Նախաքննության մարմնի 2019թ. հոկտեմբերի 3-ի որոշմամբ ԼՂՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով քրեական գործի վարույթը կարճվել է և Հ. Ավանեսյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել՝ վերջինիս արարքում ԼՂՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայության հիմքով:

Նշված որոշումը բողոքարկվել է ԱՀ Մարտունու դատախազություն՝ տուժողների ներկայացուցիչ Ս. Ավանեսյանի և նրա ներկայացուցիչ Ռ. Ավանեսյանի կողմից:

ԱՀ Մարտունու շրջանի դատախազ Վ. Միրզոյանի 2019թ. հոկտեմբերի 18-ի որոշմամբ բողոքը մերժվել է:

Քննիչի և դատախազի վերոնշյալ որոշումների դեմ տուժողների ներկայացուցիչ Ս.Ավանեսյանը և նրա ներկայացուցիչ Ռ.Ավանեսյանը բողոք են ներկայացրել ԱՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան /այսուհետ՝ նաև Առաջին աստիճանի դատարան/ խնդրելով վերացնել նշված որոշումները: Բողոքաբերները, միաժամանակ, միջնորդել են հարգելի համարել և վերականգնել որոշումները դատական կարգով բողոքարկելու բաց թողնված դատավարական ժամկետը:

Առաջին աստիճանի դատարանը 2019թ. նոյեմբերի 29-ի որոշմամբ միջնորդությունը մերժել է՝ բողոքը թողնելով առանց քննության:

Առաջին աստիճանի դատարանի նշված որոշումը տուժողների ներկայացուցիչ Ս.Ավանեսյանը և նրա ներկայացուցիչ Ռ.Ավանեսյանը բողոքարկել են ԱՀ վերաքննիչ դատարան /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/:

Վերաքննիչ դատարանը 2020թ. մայիսի 19-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, Առաջին աստիճանի դատարանի 2019թ. նոյեմբերի 29-ի որոշումը բեկանել. թիվ 173013.19 քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին ԱՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչության երկրորդ քննչական բաժնի քննիչ Ս.Բաբայանի 2019թ. հոկտեմբերի 3-ի որոշումը և այդ որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին ԱՀ Մարտունու շրջանի դատախազ Վ.Միրզոյանի 2019թ. հոկտեմբերի 18-ի որոշումը վերացվել է:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ԱՀ գլխավոր դատախազի տեղակալ, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական Ս.Հակոբյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Մույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերող անձը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը չի համապատասխանում ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 411-րդ, 412-րդ, 370-րդ հոդվածներին, և նշված իրավանորմերի ոչ ճիշտ մեկնաբանման և կիրառման արդյունքում խախտվել են դատական ակտին ներկայացվող օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջները: Նշված նորմի պահանջների չպահպանումն առաջացրել է ԱՀ Սահմանադրության և քրեական դատավարության հիմնաքարային՝ օրինականության սկզբունքի խախտում:

Բողոքաբերը վճռաբեկ բողոքում բարձրացրել է հետևյալ հարցերը՝ ակնկալելով դրանց վերաբերյալ Գերագույն դատարանի իրավական դիրքորոշումը՝ կարևորելով այն հետագա իրավակիրառ պրակտիկայի զարգացման համար.

- իրավասու է արդյոք Վերաքննիչ դատարանը, քրեական հետապնդման մարմնի որոշման բողոքարկման ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու միջնորդությունը մերժելու մասին Առաջին աստիճանի դատարանի դատական ակտը բեկանելիս, վերացնել նաև ստորադաս դատարանի ըստ էության քննության առարկա չդարձած գործն ըստ էության լուծող՝ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը՝ առանց դրանց օրինականությանն ու հիմնավորվածությանն անդրադառնալու,

- իրավասու է արդյոք Վերաքննիչ դատարանը վերացնել նախաքննության մարմնի՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու ու դրա դեմ բերված բողոքը մերժելու վերաբերյալ դատախազի որոշումները,

- կարող է արդյոք համարվել օրինական չհիմնավորված, չպատճառաբանված կամ ոչ պատշաճ պատճառաբանված դատական ակտը:

Շարադրելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ, 48-րդ, 289-րդ, 413-րդ, 416-րդ, 424-րդ, 425-րդ, 430-րդ հոդվածների համապատասխան դրույթները, բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը որոշումը կայացրել է նշված նորմերի պահանջների խախտմամբ, որն ազդել է գործի ելքի վրա, ուստի անհրաժեշտ է դատական ակտը բեկանել և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության, սահմանելով նոր քննության ծավալը:

Ըստ բողոքաբերի՝ մեջբերած իրավանորմերից բխում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատախազական հսկողության և դատարանի վերահսկողության շրջանակներում քննվող բողոքների արդյունքում խախտված իրավունքների ձևերն ու եղանակները տարբերվում են: ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված նորմերի վերլուծությունից բխում է, որ համապատասխան բողոքի քննության արդյունքում դատարանն անձի խախտված իրավունքը և ազատությունը պետք է վերականգնի նշված օրենսգրքի 301-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի հիման վրա, որով կարգավորված է անձի խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանն ուղղված իրավասու մարմնի /պաշտոնատար անձի/ պարտականությունների շրջանակը:

Բողոք բերող անձը պնդում է, որ «քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու իրավասությունը գտնվում է դատարանի կողմից մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության սահմաններից դուրս և հանդիսանում է դատախազի բացառիկ լիազորությունը, ուստի, այն դեպքում, երբ, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, դատարանը վիճարկվող որոշումը վերացնելու միջոցով գործադրում է դատախազի՝ քրեական վարույթի հետագա շարժը վերսկսելու բացառիկ լիազորությունը, դուրս է գալիս քրեադատավարական օրենքով նախատեսված իր լիազորությունների շրջանակներից»:

Ըստ բողոքաբերի, եթե դատարանը եզրահանգում է, որ վիճարկվող որոշմամբ կամ գործողությամբ /անգործությամբ/ թույլ են տրվել մարդու իրավունքների և ազատությունների խախտումներ, ապա որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 301-րդ հոդվածի 5-րդ մասի իմաստով այդ որոշման հասցեատեր «վարույթն իրականացնող մարմին» է համարվում ինչպես քրեական գործով մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացրած դատախազը, այնպես էլ՝ նախաքննություն իրականացրած մարմինը:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով գործն ըստ էության չլուծող դատական ակտի դեմ բերված բողոքի քննության ընթացքում նման լիազորության բացակայությունը և ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 301-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը չստուգելով, որոշում է կայացրել վիճարկվող որոշումները վերացնելու մասին՝ դրանով իսկ դուրս գալով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններից, ինչը, բողոքաբերի պնդմամբ, հանդիսանում է ԱՀ Սահմանադրությամբ և ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված օրինականության սկզբունքի խախտում:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում կայացված որոշման դեմ բողոքի քննության ընթացքում չի կարող ստանձնել այն նույն լիազորությունները, որոնք քրեական դատավարական օրենսդրությամբ վերապահված են Առաջին աստիճանի դատարանին: Վերաքննիչ դատարանի

լիազորությունները սահմանափակված են Առաջին ատյանի դատարանի կողմից գործը քննելու ընթացքում քրեադատավարական օրենքի դրույթները պահպանելու կամ չպահպանելու և դրա հետևանքով՝ անձի իրավունքների խախտման փաստերի ստուգմամբ, ինչը սույն գործով Վերաքննիչ դատարանը խախտել է և գնահատման է արժանացրել այն հանգամանքները, որոնք Առաջին ատյանի դատարանն ընդհանրապես չի քննարկել:

Բողոքաբերը խնդրել է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի ԸԲԴ/0027/11/19 քրեական նյութով կայացրած դատական ակտը՝ քննիչի 2019թ. հոկտեմբերի 3-ի՝ վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը և այդ որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին ԱՀ Մարտունու շրջանի դատախազ Վ.Միրզոյանի 2019թ. հոկտեմբերի 18-ի որոշումը վերացնելու մասով և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության, սահմանելով նոր քննության ծավալը:

### **3.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

Բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը

1. Առաջին ատյանի դատարան ներկայացված բողոքում տուժողների ներկայացուցիչ Ս.Ավանեսյանը և նրա ներկայացուցիչ Ռ.Ավանեսյանը խնդրել են վերացնել թիվ 173013.19 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին ԱՀ ՔԿ տարածքային քննչական վարչության 2-րդ քննչական բաժնի քննիչ Մ.Բաբայանի 2019թ. հոկտեմբերի 3-ի որոշումն ու այդ որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին ԱՀ Մարտունու շրջադատախազ Վ.Միրզոյանի 2019թ. հոկտեմբերի 22-ի որոշումը: Բողոքաբերները, միաժամանակ, միջնորդել են հարգելի համարել և վերականգնել որոշումները դատական կարգով բողոքարկելու բաց թողնված դատավարական ժամկետը:

2. Առաջին ատյանի դատարանը 2019թ. նոյեմբերի 29-ի որոշմամբ միջնորդությունը մերժել է՝ բողոքը թողնելով առանց քննության, պատճառաբանելով, որ «...բաց թողնված ժամկետը հարգելի համարելու մասին միջնորդությունը մերժվում է, հետևաբար Քննիչի՝ 03.10.2019 թվականի և Դատախազի՝ 18.10.2019 թվականի որոշումները վերացնելու մասին բողոքը քննության առնվել չի կարող, որպիսի պայմաններում բողոքի նշված փաստարկներին Դատարանը չի անդրադառնում»:

3. Նշված որոշման դեմ տուժողների ներկայացուցիչ Ս.Ավանեսյանի և նրա ներկայացուցիչ Ռ.Ավանեսյանի բերված վերաքննիչ բողոքի հիման վրա դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, Վերաքննիչ դատարանը բավարարելով վերաքննիչ բողոքը և վերացնելով Առաջին ատյանի դատարանի որոշումը, նշել է՝ «Թիվ 173013/19 քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին ԱՀ քննչական վարչության երկրորդ քննչական բաժնի քննիչ Մ.Բաբայանի 2019թ. հոկտեմբերի 3-ի որոշումը և այդ որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին ԱՀ Մարտունու շրջանի դատախազ Վ.Միրզոյանի 2019թ. հոկտեմբերի 18-ի որոշումը վերացնել»:

4. Վերաքննիչ դատարանի որոշումն այդ մասով բողոքարկել է ԱՀ գլխավոր դատախազի տեղակալ, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական Ս.Հակոբյանը:

### **4.Գերագույն դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումը**

Գերագույն դատարանն արձանագրում է, որ դատական ակտի պատճառաբանվածության չափանիշների տեսանկյունից Վերաքննիչ դատարանի կողմից Առաջին ատյանի դատարանի վճռի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու կապակցությամբ առկա է օրենքի

միատեսակ կիրառության ապահովման խնդիր: Այս առումով Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

Մույն նյութով Գերագույն դատարանի կողմից քննության առնվող իրավական հարցադրումը հետևյալն է.

- կարող է արդյոք համարվել օրինական չհիմնավորված, չպատճառաբանված կամ ոչ պատշաճ պատճառաբանված դատական ակտը:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 370-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանի դատավճիռը պետք է լինի պատճառաբանված: Պատճառաբանման ենթակա են դատարանի կողմից դատավճռում շարադրվող բոլոր հետևությունները և որոշումները:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 411-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը կայացնում է նույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոններով...:

Մեկնաբանելով մեջբերված իրավադրույթները և վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումն այս կապակցությամբ՝ Գերագույն դատարանը շեշտում է, որ դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս և մինևույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար:

Պատճառաբանված որոշման բացակայությունն արդեն իսկ օբյեկտիվորեն սահմանափակում է վերադաս դատական ատյանի, օրենսդրորեն սահմանված լիազորությունների շրջանակներում, ստուգման ենթարկելու բողոքարկվող դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը և կայացնելու արդարացի որոշում, հետևաբար դատական ակտի չպատճառաբանված լինելը հանգեցնում է քրեական դատավարության կարևորագույն սկզբունքներից մեկի՝ Սրբախի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածով հռչակված արդար դատաքննության իրավունքի խախտման:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատական ակտի պատճառաբանվածության չափանիշը վերաբերելի է նաև Վերաքննիչ դատարանի կողմից կայացվող դատական ակտերին: Հետևաբար, բոլոր դեպքերում դատական ակտ կայացնելիս, Վերաքննիչ դատարանը պարտավոր է պատճառաբանել, թե ինչու է եկել այս կամ այն հետևության և որ իրավանորմերով է ղեկավարվել նման որոշում կայացնելիս: Դատական ակտի տարբեր կառուցվածքային մասերում /ներածական, նկարագրական-պատճառաբանական, եզրափակիչ/ արտացոլված տեղեկությունները պետք է ներքին միասնական կապ և տրամաբանություն ունենան՝ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին համահունչ: Դատական ակտի եզրափակիչ մասում առկա եզրահանգումները պետք է բխեն նույն դատական ակտի նկարագրական-պատճառաբանական մասում շարադրված հետևություններից և համապատասխանեն դրանց: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի կողմից կայացվող՝ վերաքննիչ բողոքը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ որոշման եզրափակիչ մասում առկա եզրահանգումը նույնպես պետք է համապատասխանի պատճառաբանական մասում շարադրված վերլուծությանը:

Միայն Վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտի պատճառաբանվածության վերոնշյալ պահանջների պահպանման պարագայում է, որ Գերագույն դատարանը հնարավորություն կունենա ստուգելու կայացված դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը: Հաշվի առնելով արդարադատության իրականացման ընթացքում կայացված դատական ակտերի իրավական նշանակությունը՝ Գերագույն դատարանը փաստում է, որ քրեական դատավարության

ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված որոշումների կայացումն անընդունելի է և խաթարում է արդարադատության բուն էությունը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ դատարանի պարտականությունն է հանդիսանում դատական ակտում ամրագրել և թույլատրելիության, վերաբերելիության ու արժանահավատության տեսանկյունից գնահատման ենթարկել այն ապացույցները, որոնց վրա են հիմնված դատարանի հետևությունները, ինչպես նաև նշել այս կամ այն ապացույցն արժանահավատ համարելու փաստարկները: Պատճառաբանությունը պետք է կառուցվի տրամաբանորեն կապված և գործի փաստական հանգամանքները բխող հստակ, որոշակի և համոզիչ հետևությունների վրա:

Սույն նյութի ուսումնասիրությունից հետևում է, որ Առաջին ատյանի դատարանը 2019թ. նոյեմբերի 29-ի «Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների բողոքարկման բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումներն առանց քննության թողնելու» որոշմամբ մերժել է թիվ 173013/19 քրեական գործով քննիչի 2019թ. հոկտեմբերի 3-ի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման, ինչպես նաև Մարտունու շրջատախազ Վ.Միրզոյանի 2019թ. հոկտեմբերի 18-ի որոշման բողոքարկման բաց թողնված ժամկետը հարգելի համարելու մասին Ս.Ավանեսյանի և նրա ներկայացուցիչ Ռ.Ավանեսյանի միջնորդությունը և որոշումների բողոքարկումը թողել է առանց քննության:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանն իր որոշմամբ անդրադարձել և գնահատման առարկա է դարձրել միայն բաց թողնված դատավարական ժամկետի վերականգնելու վերաբերյալ միջնորդության մեջ նշված հիմքերը և չի անդրադարձել քննիչի և դատախազի որոշումներին:

Վերաքննիչ դատարանը 2020թ. մայիսի 19-ի որոշման եզրափակիչ մասում նշել է հետևյալը. «ԸԲԴ/0027/11/19 քրեական նյութով ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2019թ. նոյեմբերի 29-ի որոշումը բեկանել: Ս.Ավանեսյանի և նրա ներկայացուցիչ Ռ.Ավանեսյանի բողոքը բավարարել: Թիվ 173013/19 քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին ԱՀ քննչական վարչության երկրորդ քննչական բաժնի քննիչ Մ.Բաբայանի 2019թ. հոկտեմբերի 3-ի որոշումը և այդ որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին ԱՀ Մարտունու շրջանի դատախազ Վ.Միրզոյանի 2019թ. հոկտեմբերի 18-ի որոշումը վերացնել»:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման պատճառաբանական մասում բացակայում է եզրափակիչ մասում շարադրված եզրահանգման վերաբերյալ որևէ հիմնավորում և պարզ երևում է, որ, գնահատման առարկա դարձնելով Առաջին ատյանի դատարանի կողմից չքննարկված հարցը, Վերաքննիչ դատարանը դուրս է եկել իր լիազորությունների շրջանակներից և թույլ է տվել դատավարական օրենքի էական խախտում, այն է՝ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ նույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք գործին մասնակցող անձանց՝ օրենքով երաշխավորված իրավունքներից զրկելու կամ դրանցում սահմանափակելու կամ այլ ճանապարհով խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա:

Գերագույն դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, դատական ստուգման ենթարկելով Առաջին ատյանի դատարանի կողմից կայացված որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը, իր



որոշման «Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը» բաժնում շարադրել է բողոքաբերների կողմից ներկայացված փաստարկները և հիմնավորումները, մասնավորապես, ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառելիության և Առաջին ատյանի դատարանի կողմից ապացույցների բազմակողմանի, օբյեկտիվ ստուգման չենթարկելու, քննիչի և դատախազի որոշումների օրինականության ու հիմնավորվածության մասին սխալ եզրահանգում անելու մասին, այդուհանդերձ, պատճառաբանական մասում որևէ անդրադարձ չի կատարել բողոքի այդ փաստարկներին միաժամանակ դրանց վերաբերյալ եզրահանգումը ներառելով որոշման եզրափակիչ մասում: Արդյունքում, առանց որևէ պատճառաբանության, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ քննիչի և դատախազի որոշումները ենթակա են վերացման, չարձանագրելով անգամ, որ Առաջին ատյանի դատարանի կողմից նշված հիմքը չի քննարկվել և գնահատման առարկա չի դարձվել:

Քրեական դատավարական օրենքի էական խախտման կարգավորումը տրված է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքում, որի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ դատավճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝ դատավճռում իսպառ բացակայում է դրա նկարագրական-պատճառաբանական մասը: Գերագույն դատարանը փաստում է, որ սույն նյութով կիրառելի է նշված նորմը, քանի որ Վերաքննիչ դատարանի որոշման եզրափակիչ մասում արտահայտած եզրահանգումը պատճառաբանական մասում հիմնավորում չի ստացել:

Սույն որոշմամբ ձևավորած իրավական դիրքորոշումների համատեքստում գնահատելով բողոքի հիմքերը և հիմնավորումները, Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշման անհիմն լինելու մասին վճռաբեկ բողոքի փաստարկը հիմնավոր է, Վերաքննիչ դատարանի որոշումը չի բավարարում դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ պահանջին, ուստի ենթակա է վերացման:

Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 370-րդ, 403-րդ, 411-րդ, հոդվածների խախտումներ, որոնք ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի իմաստով հիմք են Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Հաշվի առնելով այն, որ նյութն ուղարկվում է ստորադաս դատարան՝ նոր քննության և վճռաբեկ բողոքում բարձրացված մյուս փաստարկները ստորադաս դատարանի կողմից քննարկման և գնահատման առարկա չեն դարձվել, ուստի Գերագույն դատարանը դրանց չի անդրադառնում:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասով, Գերագույն դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերաքննիչ դատարանի 2020թ. մայիսի 19-ի որոշումը մասնակիորեն բեկանել՝ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին քննիչի 2019թ. հոկտեմբերի 10-ի որոշումն ու դրա դեմ բերված բողոքը մերժելու մասին ԱՀ Մարտունու շրջանի դատախազ Վ.Միրզոյանի 2019թ. հոկտեմբերի 18-ի որոշումը վերացնելու մասով և այդ մասով նյութն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նշված ծավալով նոր քննության: Մնացած մասով Վերաքննիչ դատարանի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն

**Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ  
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ  
Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ  
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**